

ՓԵՇԱԿԸ ՈՍԿԻ Ա / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ըլում ա, չի ըլում՝ մի շատ հարուստ թգավոր ա ըլում: Վախտ-վախտ սա իր նազիր-վեզիրնուցը թաքուն ըղքատի շորեր ա հագնելիս ըլում ու քաղքե-քաղաք, գեղե-գեղ ման գալիս ըլում, թե տենու խալիսը իր վրա ի՞նչ ա խոսում:

Մի դոնում էլ մանգալիս մի գեղում տենում ա մի սիրուն ախչիկ. է՛ն դայդի սիրուն, որ մարդ տեներ, կոսեր՝ ո՛նչ ուտեմ, ո՛նչ խմեմ, նրա շիմշատ բոյուն մտիկ անեմ:

Եբոր թգավորը տուն ա հասնում, էգսի օրը իր նազիր-վեզիրնուն ասում ա.— Կերթաք էն փլան ու փլան տեղը մի գեղըցու ախչիկ կա, ես նրան հվանել եմ, ասեք, որ թգավորն ուզում ա:

Նազիր-վեզիրնին գնում են գոնում թգավորի ասած գեղը, տենում են ախչկանը, խելքներուն գնում ա, մնում են մայիլ էլած: Ախչկա հորն ու մորն ասում են, որ թգավորը նրանց ախչկանը հվանել ա, իրան կնիկ ա ուզում:

Գեղըցին ինքը աղքատ մարդ, խելքը կտրում չէ, որ թգավորը լայեղ անե իրանց ախչիկն ոգե: Հմա վերջը, եր նրան բզդորում են, ասում ա.— Մենք թգավորի դուլն ենք, եբոր թգավորը հրամայում ա, մենք ի՞նչ պտինք ասել, թող ուղե:

Վերջն էս մարդը հարցնում ա իր ախչկանը: — Ա՛յ որդի, նազիր-վեզիրնին եկել են, ասում են, որ թգավորը քե ուզում ա, ի՞նչ ջուղաք էս տալիս, ի՞նչ անենք:

— Թգավորն ի՞նչ փեշակ ունի,— հարցնում ա ախչիկը:

— Վոա՛, ախչի՛, ի՞նչ ես ասում, գժվել խո՞չես: Ի՞նչ փեշակ պտի ունենա թգավորը: Նա ըշխարիս տերն ա, ինչ ուզե՛ կոնե, ինչ ուզե՛ կոսե, ոնցոր ուզե՛ կապրի. մենք չիմս էլ նրա դուլն ենք:

— Չէ՛,— ասում ա ախչիկը,— իմ մարդը պետք ա մի փեշակ էլա գիդենա, ես անփեշակ մարդին կնիկ չեմ գնալ:

Թգավորը մնում է վերքաշված, հմա ինչ անե, ախչկա ծերա գնում ա մի հեշտ փեշակ սվորում՝ թղքագրություն: Եբոր սվորում պրծնում ա, մի լավ աննման թաղիք էլ իր նշանածի հմա ա գժում ու դրկում նրա կուշտը: Ախչիկը շատ հվանում ա: Իրան հորն ու մորը մնաք բարով ա ասում ու նազիր-վեզիրնու հետ վեկենում գնում թգավորի կուշտը:

Թգավորն օխտն օր, օխտը գշեր հրսանիք ա անում: Պսակվում են նրանք, փառքով ու պատվով ապրում: Մի տարի անց ա կենում, թե երկու տարի, թգավորն էլեղ ռաջվա պես ըղքատի շորեր ա հագնում ու քաղքե-քաղաք, գեղե-գեղ մանգալիս, թե տենու խալիսն իր վրա ինչ են խոսում: Մի դոնում էլ էտենց մանգալիս՝ ընգնում ա էն դայդի մարդկերանց ճանգը, որ նրան ծախում են մի վենձավորի վրա, եր իմանում են, որ նա լավ թղքադրութին գիդե:

Վենձավորը սրան մի մութն օթախ ա տանում, բուրդ, անեղ, թագ տալի, որ բուրդ գգե, թաղիք հարե: Թգավորն էն դայդի թաղիքնի ա գժում, որ սաղ աշխարհը ման իր եկել, հատն ու կտորը գոնուլ չիր:

Մի դոնում վենձավորի կնիկն ասում ա.— Ա՛յ մարդ, բի մեր թղքադրին մի լավ թաղիք հարել տու, տար թգավորին փեշքաշ, բալքա մեզ մի բան բաշխե:

Վենձավորը լսում ա կնգա խոսքին, գնում ա թղքադրի կուշտն ու ասում. «Ուզում եմ թգավորին մի բան փեշքաշ անեմ, մի լավ թաղիք հարե, հմա լավ տես, էն դայդի թաղիք պտիս հարել, որ հատն ու կտորը ըշխարումն էլած չի ըլի. որ տանիմ թգավորի օթախումը փռեմ, մի մազի դդար ո՛նչ ավել գա, ո՛նչ պակաս: Թե էս դայդի թաղիք չես կարացել հարել, գլուխդ տալ կտամ»:

Թգավորը որ էս լսում ա, սիրտը փորումն ուլխաղ ա ըլում: Դե՛ թգավորն ինքն ա էլի՛, իր օթախի լենքն էլ գիդե, երկենքն էլ: Թգավորը դրուստ վենձավորի ըսածի պես մի թաղիք ա հարում, եղի կռանն էլ գրում իր կնգանը, որ իրան տեղը շատ տարգուն ա. գա ըգատե: Հմա էն դայդի ա գրում, որ մենակ թգավորի կնիկը կարեր կարդալ:

Վենձավորը շատ ուրխանում ա, վեր ա կալնում էս թաղիքը, թգավորի ամարաթնին մին ա ասում ու գնում:

Նազիր-վեզրնին թգավորի կնգանը իմաց են տալիս, որ իրան մի թաղիք են փեշքաշ բերել: Թգավորի կնիկը թաղիքը տուն ա բերել տալիս, փռում օթախումը, տեսնում, որ ո՛նչ մի մազը ավել ա, ո՛նչ մի մազը պակաս: Էն սհաթը նա խելլամիշ ա ըլում, թաղքի չորսի կուռը լավ ակն ա ածում, լավ մտիկ տալի՝ մի պենջղումը տենում ա գրած բան: Կարդում ա, իմանում, որ թգավորի տեղը տարդուն ա: Կարդալնու բաշտան նա սփրթնում ա: Հեչվել էդ վախտը թգավորը շատ էր ըղքատի շորեր հագած ու ման եկած՝ շաբաթնով, ամիսնով ու տարով եղացած, հմա որ ասես գլխովն անցկացած չէր, որ թգավորի գլուխը էդ օյինը կգեր:

Էն սհաթն նէտ հրամայում ա, որ էն թղքադարին սաղ-սլամաթ իր կուշտը բերեն:

Նազիր-վեզրնուն էս վենձավորի հետը դրկում ա, գնում են նրա տունը, մտնում են մութն օթախը: Թգավորն էն դայդի փոխված ա ըլում, որ նրան էլ ճնանչում չեն: Նրան բաղնիս են տանում, լեղացնում, թագա շորեր տալիս, որ հագնու, տանում են թգավորի ամարաթնին: Վենձավորը նրան խրատ ա տալիս՝ ըսե՛նց կանգնի, ընե՛նց գլուխ տուր, է՛ս ասա, է՛ն չասես:

Մի խոսքով նրան ամեն բան սվորացնում ա, թե թգավորի կշտին ի՛նչ պտի ասել, ի՛նչ չէ:

Թգավորը, որ մտնում ա իր օթախը, կնիկը նրան էն սհաթին ճնանչում ա, ընկնում ա նրա խտիտը, փթաթվում, պաչպչորում. . . շատ ուրխանում:

— Դրուստ ես ասել, ա՛յ կնիկ,— ասում ա թգավորը,— դրուստ որ դարդակ թղքադրությունն էլ թգավորութենիցը բանձր ա:

Խերն էստի, շառն ու շահմաթը էնդի: